ՄՇԱԿ

№31 Օգոստոսի 7 1875 24

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ”

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9 — 12 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆրանսիայի հիւանդութիւնը: — Ներքին տեսութիւն: Երրագործութիւնը Շամշուլդայում: Նամակ Լոռուց: Նամակ Շամախուց: Նամակ Ղուբայից: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Գերմանիա: Սպանիա: Նամակ Գերմանիայից: — Խառն լուրեր: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրական: Հացի խնդիրը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Լինում են րոպէներ ազգերի կեանքում, երբ նրանք անհատների պէս հիւանդ են լինում:

Ֆրանսիան քանի մի տարի է որ հիւանդ է, հիւանդ է ուղեղով:

Ֆրանսիական ազգային-ժողովից քուէարկած վերջին օրենքը կրթութեան ազատութեան վրա թող լինի մեզ այդ մասին պարզ ապացոյց:

Շատ գեղեցիկ խօսք է՝ կրթութեան ազատութիւնը, — բայց դժբաղդապէս պէտք է ֆրանսիացի լինել խօսքերով յափշտակվելոը համար, առանց քննելու գաղափարի բուն և յատուկ նշանակութիւնը:Ամէրիկայի Միացեալ Նահանգների քաղաքական պատերազմի ժամանակ հարաւային նահանգների ստրկատէրերը ասում էին՝ մենք ազատ երկրի քաղաքացիներ ենք, մենք պէտք է վայելենք կատարեալ ազատութիւն, ուրեմն մենք պէտք է ազատութիւն ունենանք ստրկներին պահելու:

Ուրեմն ազատութեան անունով կա՞րելի է ստրկութիւնը պահպանել…

Նոյն արել է նորերումս և Ֆրանսիան: Նա վճռել է մտցնել երկրի մէջ կրթութեան ազատութիւնը, ուրեմն այդ օրէնքի զօրութեամբ թոյլ է տուել և կղերական կուսակցութեանը և եզուիտներին իրանց սեփական թէ տարրական, թէ միջնակարգ, թէ բարձր ուսումնարաններ հիմնելու:

Եզուիտութիւնը նշանակում է մտքի, խղճի, ազատ ոգու բռնաբարումն…

Ազգային ժողովը թոյլ է տալիս եզուիտներին ազատ կերպով հիմնել և պահպանել երկրում իրանց ուղղութեան ուսումնարանները, ուրեմն ֆրանսիական ազատ հանրապետութիւնը ազատութեան սկզբի անունով պէտք է համբերէ մտքի, խղճի և համոզմունքի բռնաբարումը:

Հրաշալի լոգիկա՝ ազատութեան անունով համբերել բռնաւորութիւնը… Ազատութեան անունով համբերել մտքի ստրկութիւնը…

Բայց չը պէտք է մոռանալ, որ այդ օրէնքը քուէարկող Վերսայլի ազգային-ժողովի անդամներից բոլորը չեն արել այդ տեսակ անզգոյշ քայլ իրանց միամտութեան պատճառով և յափշտակվելով միայն կրթութեան ազատութիւ բառով, — ոչ, ամենքը պ. Լաբուլէի պէս միամիտ մարդիկ չեն: Շատերը և գուցէ մեծ մասը քուէ են գցել յօգուտ յիշեալ օրէնքի գիտակցական կերպով, հանրապետութեան գոյութեանը վնասելու համար:

Միապետական ամեն կուսակցութիւնների, բօնապարտեանները և իրանք կղերականները շատ լաւ են հասկանում որ իրաւունք տալ եզուիտներին դաստիարակել նոր սերունդը, նշանակում է մահու զարկ տալ հանրապետութեան գոյութեանը:

Եւ ճշմարիտ. ի՞նչ գեղեցիկ նոր սերունդ կ’ածէ այժմ Ֆրանսիայում՝ մոլեռանդ, սահմանափակված, թշնամի նորութեան, կոյր, յետադէմ… Դրա՞նք, եզուիտների այդ աշակերտները, պէտք է լինեն հանրապետութեան ապագայ քաղաքացիները…

Արդէն եզուիտները բացի բազմաթիւ տարրական և միջնակարգ ուսումնարաններից, շուտով հիմնելու են երեք կաթոլիկ համալսարան՝ մինը Փարիզում, միւսը Օրլէան, իսկ երրորդը Անժէ քաղաքում…

Կե՞ցցէ խաւար…

Մնաս բարև Ֆրանսիացի, քեզ լուսաւորեալ ազգերի առաջնորդ անուանող երկրի ազատութիւնը…

Միայն մի բան հաստատ պէտք է իմանանք, որ բօնապարտեանները, որք այդքան յօժարութեամբ քուէ տուեցին այժմ այդ օրէնքին, եթէ իրանք կառավարութեան ղեկը ձեռքումն ունենային, — երբէք չէին հրատարակի այդ տեսակ օրէնք:

Նրանք շատ լաւ են հասկանում որ տալով եզուիտներին ազատ դաստիրակութեան իրաւունք, նրանք նպաստում են հանրապետութեան մէջ երկպառակութեան խմորն մտցնելուն, նպաստում են Ֆրանսիայի արդեան պետական կազմակերպութեան մէջ քայքայման սերմը գցելուն…

Իսկ յետոյ պղտոր ջրի մէջ ձուկ պէտք է որսան…

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՇԱՄՇՈՒԼԴԱՅՈՒՄ

Մեր լրագրութեան օդտող յօդվածների վերա թող ներվի մեզ անել քանի մի նկատողութիւններ: Յօդվածագիրը մեր մէջսովորաբար ասպարեզ դուրս գալուց յետոյ, նկարագրելով իւր գիւղը, նորա բնակչաց որքանութիւնը, սովորութիւնները և այլն և այլն, երբեմն աւելացնում է „մեր մէջ քամբախտաբար վաճառականութիւնը կամ այս ինչ առարկան դարձեալ գտնվում է անմխիթար դրութեան մէջ, թէև նրա զարգացած լինելն օգտաբեր կը լինէր“. սորանով էլ վերջացնում է յօդվածը. իսկ թէ ինչի՞ այդ օգտաբեր պարապմունք գտնվում է այդպիսի ընկած դրութեան մէջ, ի՞նչ պատճառով նա այդ յիշած գիւղում կամ գաւառում օգտաբեր կը լինէր, ի՞նչ հում նիւթեր կան այդտեղ վաճառականութեանը կամ երկրագործութեանը նպաստելու, — այս ամենքի համար լռում է յօդվածագիրը: Գործնականութիւն, — ահա ի՞նչ է պահանջու գիւղացին. լոկ խօսքը նշանակութիւն չունէ նրահամար, ինչ չ’ապացուցանես նորան իւր գործածի սխալները: Օրինակ, վերցնենք Ճամշուլդայի մէջ գործ դրած երկրագործութեան եղանակը և տեսնենք թէ՝ ի՞նչ միջոցներ արդեօք ցոյց են տալիս հողագործութեան այստեղ ծաղկելուն: Ճամշուլդայի շուրջը պատած են անտառներ, լեառներ և տեղ-տեղ դաշտեր. լեռնոտ տեղեր ծածկող հողն առհասարակ շէկ-աւազախառն է. իսկ դաշտավայրերինը սև աւազախառը կամ մոյգ է. յիշած հողի տեսակների շերթերը նկատելի է, որ կանոնաւոր դասաւորված են և շատ քիչ տեղերում խառնված: Ահա այս տեսակ հողերի մէջ է Ճամշուլդեցին իւր երկրագործութիւնը անում. ոմանք անտառների մէջ, շվաքների տակ, ոմանք զառիվայրներում և կամ մութ ձորերում, ուր արեգակի ճառագայթներն անգամ չեն թափանցում… Այս և սորանց պէս շատ տեղերում Ճամշուլդեցին շպռտում է իւր սերմը առանց որ և է հոգացողութեան: Օրինակ, գութանավարը սկսում է Մայիս ամսից և առանց ուշք դարձնելու հողի մէջ գտվող քարերի, ծառերի արմատների չքացնելուն, լծելով 10 — 12 լծնանի ծանրաշարժ գութանը սկսում են վարել: Մէկ ամսի ընթացքում, լաւ թէ վատ հազիւ վերջացնելով գութանավարը, արդէն ցանքի ժամանակը մօտենում է, սերմ է հարկաւոր: Բայց նորանք իւրեանց ունեցած ցորենի կէս մասը պարտքերին տալով, կէս մաւը ուտելով անկարող են լինում տան մէջ սերմացու ցորեն գտնել. այս դիպվածում դարձեալ պիտի դիմած մի հարստի, որից պարտք անելով և առանց ուշադրութեան այդ սերմացուի մաքրութեան վերա ցանում են, որից առաջ նոյնպէս չեն մաքրում հողը. ոչ մի ձևով չեն պարարտացնում նորան. գետինը նամ է կամ չոր, այդ նորանց առջև նշանակութիւն չունէ, նոյնպէս կարգ չը կայ ցանելու ժամանակ, հետևապէս ցանածը լինում է մի տեղ չափազանց նոսր, միւս տեղ դալին: Հողի ճումբերը չեն փշրում, չեն մանրացնում բացի այդ տափան կոչված

թեթև գործիքը սկսում է հողի երեսով թողնելով սերմի հատիկները երեսին, որ թռչունների կերակուր է դառնում: Նամ հողում տափանի ճախերի վրա կպչում են ցորենի հատիկները հողի հետ: Առհասարակ մեր մէջ սովորութիւն չը կայ, որ չոր ծղնոտները կրակ տան, —

հակառակ դիպվածում տեսակ-տեսակ խոտեր են բսնու ցորենի հետ և հետևապէս որոմնը խեղդում է հասկերը: Անտառների մօտ ցանած արտերը շվաքի տակ լինելով թառամում են, ուստի հասկերը նուազ են մնում, մինչդեռ անտառային խոնաւութիւնն էլ նորան պահում է մասամբ իսկ չորէին տարիներում աւազոտ տեղերում գտնվող արտերը բոլորովին չորանում են: Այս ձև երկրագործութիւնից գիւղացին երբեմն մէկին երկու է ստանում և երբեմն ոչինչ: Այսպէս ուրեմն գիւղացին տարեկան որ 10 — 15 փութ սերմ է ցանում, այնքան արդիւնք չէ ստանում, որով կարելի լինէջ իւր տունը կառավարել կամ պարտքերը վճարել. բայց հարցնես նրանց ո՞վ է մեղաւոր… „Մեղաւորը մենք ենք, աղաղակում են, Աստոծ մեր մեղքերի հմար մեզ պատիժ ա տալիս… մեր ռիզդը կտրըմ՝ մասիլները չորացնըմ ա… գնա՞ց վազվա խէրն ու բարաքեաթը, աղաղակում են, գնա՞ց վաղվա սուրբ հողն ու ջուրը, որ մենք էլ արտերի հմար օխտը դեղից ժողովք չանենք, մատաղ չը մօրթենք, տէրտէրի հետը հանդը չը դուրս գանք ու թափոր չանենք…“

Նկարագրելուց յետոյ այն, այնպէս ասես, խաղը, որ անում է գիւղացին հողի հետ և որից յաճախակի վնաս է ստանում, մենք առաջարկում ենք այստեղ այն օգտաբեր ձևերը, որոնք վնասի տեղ անշուշտ օգուտ պէտք է տային: Ահա մեր ասելիքը. գութանավարից յառաջ, երբ գիւղացին պարապ ժամանակ էր անցուցանում ձմեռը, գերդաստանի հետ ոտքերը անթեղ արած բուխարկին (վառարանի) մոխրում, կարող էր իւր վարելու տափերի մէջ գտնվող քարերը, ծառի արմատները մաքրել. արտը շվաքից հեռու պահպանելու համար պէտք է կարտած և նորա շուրջը գտնվող ծառերը[1]: Ծառերը ոչ մի կերպ չեն կարող օգնել արտին, բացի այն ոչ խոնաւ[2] են պահում նորան և բեղմնաւորեցնում են գետինը իւրեանց խաշամներով (տերևներով): Մեծ օգուտ կը ստացվէր եթէ խաշամը երկար հողի տակ փտեցնելուց յետոյ շաղ տային վարելուց առաջ հողի մէջ: Այս օգուտը կունենար և փէյնի շաղ տալը:Սև հողի մէջ փէյնի ածելու ժամանակ պէտք է խառնել և համեմատաբար ղում, իսկ արաքիւնի տեղերը, ուր հողի ներսը ղում էր աւելորդ էր. այստեղ ընդհակառակն սև հողն աւելի լաւ էր ածել: Գութանավարի ժամանակ մաչկալը պէտք է ուշք դարձնի վարելուն. ակոսների անհամահաւասար խորութիւնը կամ երես լինելը պակաս վնաս չեն հասցնում սերմին, որքան կարելի է, պէտք է աշխատել ճմբները շուռ տալ կանաչ
երեսի վրա: Նոր վարած տափերը (աշնանավար) շուտ չը պէտք է ցանել, պէտք է թողնել արեգակի տակ մնայ, իսկ եթէ ամառվայ կարճատևութիւնը շտապեցնում է ցանքը յետ չը ձգել, ապա հարկաւոր էր երկու անգամ վարել չթել — աջ ու ձախ, որ հողը փշրվի, մաղվի: Գետինը, ինչպէս դեռ չը վարած, նոյնպէս և ցանելուց առաջ պէտք է իստակել կողմնակի — խառնուրդներից, քարերից, արմատներից և այլն և այլն: Չը պէտք է մի հողում ամեն տարի մի տեսակ միայն սերմը ցանել, այլ զանազան ցեղի սերմեր:Պէտք է հասկանալ, որ

[1] Թէպէտ այս կերպով մենք վնասում ենք անտառների զարգանալուն, սակայն կարիքը ստիպում է անել: (?)
[2] Շատ խոնաւութիւնը նոյնպէս վնաս է, սերմը այս դիպուածում կարող էր փտել:

բաւականին խորութեամբ սև հողում կարելի է ցանել երկար քոք ունեցող սերմեր — ցորեան չօվդառ և այլն, իսկ որտեղ ներսը դում է, երեսը քիչ սև, ինչպէս Շամշուլդայում գտնվող տափերից մեծ մասը, հարկաւոր էր ցանել կարճքոք ունեցող սերմեր. — գարի, կօրէկ աճար և այլն, այս դիպվածում երեսի սև հողի մէջ սերմը կաճի, իսկ աւազին կամ կաւին հասնելով կը չմշկի ու կը չորանայ: Կարևոր հարցերից մինն էլ այն է՝ որ պէտք է ճանաչել սերմերի լաւ տեսակները, օրինակ, սիպտակահատ, չարդա, թաթուխ, անքիստ և դարնան, սորանք բաւական աջողակ սերմեր են Շամշուլդայի պէս մի տեղում, ուր երբեմն թաթուխի կամ սիպտակահատի տեղ գարի ու պռօթուկ են ցանում: Այդ տեսակետից ձեռք բերած սերմերը պէտք է լինի խոշոր, տռուգ, ծանր ու հասած և որոնց նախ պէտք է մաքրել և ապա ցանել: Ոչ մի միջոցով չէ կարելի այնքան օգուտ ստանալ, որքան ընտիր սերմի ցանելուց: Ես չեմ մոռանում այստեղ նոյնպէս, որ հողի գիտնական լեզուն իմանալ հարկաւոր էր, թէ այս ի՞նչ հողը ինչ տեսակ սերմ էր պահանջում, հացի՞, սիսեռի կորեկի թէ ուրիշ բանի, որի համար հարկաւոր էր մասնաւոր գիտութիւն, որ գոնէ առ այժմ դժուար կարող էր ձեռք բերել մեր գիւղացին, շատ պատճառներով:

Ցանողը պէտք է աշխատի սերմը հաւասարապէս ցանել, բոլորովին չը պէտք է վռազի: Անօգուտ էր քամի ժամանակում ցանք անելը: Պէտք չէ բուռը լիքը վերցնել, այլ կէս ու կէս բռնով և հանդարտ ցանել: Ցանքը պէտք է լաւ լինի. հացի պտղաբերութիւնը գլխաւորապէս կախուած է ուղիղ ցանքից, բայց ուղիղ ցանքը հմտութիւնից և ցանողի արագութիւնից: Լաւ սերմ ցանող ամեն տեղ միշտ հազուագիւտ է, դժուար է գտնել այնպիսի մի ցանող, որ գիտենար երկու ձեռքով ցանել և այս հմտութիւնից դեռ շատ և շատ հեռի են Շամշուլդեցոց մի քանի գոված սերմնացաններ անգամ, որոնք ցանելու ժամանակ „սուրբ Սարգիս“ ու „սուրբ Գէորգ“ բառերը կրկնում են անդադար և տեղ-տեղ, ակոսի ծայրերում, երեսը խաչ հանում աչքերը երկինքը գցելով…Երկու ձեռքով ցանելու օգուտներից մինն էլ այն է՝ որ իմացվում է ցանված և չը ցանվա’ տեղերը: Դժուար կարելի է սահմանել մի այնպիսի կանոն, ասվեր թէ ի՞նչքան ի՞նչ սերմից պէտք է ցանել այս ինչ հողում: Սորա համար Շամշուլդայում, նոյնպէս և զանազանգիւղերում գործ են դնում առհասարակ

զանազան քանակութիւն. օրինակ, մէկը մէկ օրավարի մէջ 5 փութ սերմ է ցանում, միւսը՝ 7 կամ աւելի և այլն: Ջրվող տեղերի հացը այնքան համեղ չէ, որքան անջուր տեղերին. Շամշուլդայից գոյացած հացը այս պատճառով բաւական համեղ է և առաջինն է համարվում Տփխիսի մէջ, իսկ այն ժամանակներում, երբ բոլորովին երաշտային է տարին, կարելի է մասամբ ջուր հասցնել նորա արտերին Քօռ Խրամի գետից, որը ունի արդէն իւր վաղեմի ջրանցքը: Գութանի գործիքների թեթևութեան և գործ ածելու մասին մենք միայն կասենք, հետևեայլ մերձակայ Աղբուլաղաբնակ (Բէլիկլուչ) ռուսներին, որոնք փոխանակ 10 լուծ գոմէշի, 2 — 3 ձիով էլ վար են անում մեծ արագութեամբ:

Այսքան խօսելուց յետոյ տեսանելի է, որ երկրագործութիւնը օգտաբեր կը լինէր Շամշուլդայում, եթէ գիւղացին հասկանար սորան վերաբերեալ վեր յիշած նկատողութիւնները, որոնց իրագործման համար դեռ ևս կասկածաւոր ենք, քանի չյ կայ մեր մէջ այս ցանկալի առարկային կատարելութեանը հասցնելու համար գիւղական ընկերութիւն. այսինքն. այնպիսի մի խումբ, որի ջանքով միայն կարելի է հասնել այն օրին, երբ գիւղացին ջերմ սիրով պէտք է կպչէր իւր հողի կտորին և նորանում միայն տեսնէր իւր փրկութիւնը:

Ա. Արարատեանց

ՆԱՄԱԿ ԼՕՌՈՒՑ

Ողունլարից *) ես իմ ճանապարհը շարունակեցի դէպի Արդուի անուանած գիւղը: Գիւղիս դիրքը նման է կաթսայիէ երեք կողմից, այդ է հիւսիսից հարաւից և արևմուտքից շրջապատուած է անտառախիտ լեատներով, այստեղի նշանաւոր ծառերն ենէ կաղնին, յաճարին, որոնց պտուղները գործ են ածում խոզերի կերակուր և մանաւանդ վայրենի խնձորը, տանձը, հոնը և սոցա նման այլ մրգեր:

Գիւղս բաղկացած է 14 տնից, բոլորեքեան հայք են, և պարապում են՝ երկրագործութեամբ և անասնապահութեամբ, հողը պատկանում է Լօռիս-Մէլիքեանին և Քալանթարովներին:

Գիւղիս արևմտեան կողմը կայ մի սրբատաշ եկեղեցի, ուր Յովհաննէս Իմաստնասէր Օձնեցու ճգնուելու տեղն է եղել, և այժմ ևս գերեզնանն է: Բաւականին գեղեցիկ ճարտարապետութեամբ է շինուած: Այս եկեղեցուց դէպի արևելք, մի ձորի մէջ սարի ստորոտում, կայ մի երկայն օձաձև, կապոյտ ժայռ որից բխում է ջուր: Գիւղացիք այս ժայռի վերա այսպիսի աւանդութիւն են պատմում — «Մի օր Յովհաննէս Իմաստնասէրը, իւր եօթն աշակերտներով պատարագի արարողութիւնը կատարելիս, յանկարծ լսվում է մի զարհուրելի ձայն: Յովհաննէս Իմաստնասէրը չը
կամենալով ընդհատել արարողութիւնը, ուղարկում է իւր աշակերտներից մինին, որ տեսնէ ինչ է, ուղարկած աշակերտը այլ ետ չէ վերադառնում, յետոյ երկրորդն է ուղարկում, նա ևս չէ վերադառնում, յետոյ երրորդն — նա նոյն կերպով: Այսպէս եօթը աշակերտներին ուղարկում է, բայց ոչ մէկը մի համբաւ չէ բերում: Յուսահատուած և մտածողութեամբ Յովհաննէս Իմաստնասէրը աւարտում է պատարագի արարողութիւնը, և ապա դուրս է գնում, որ տեսնէ ինչ ձայն էր և աշակերտները ինչ եղան: Դուրս լինելուն պէս տեսնում է մի ահագին օձ, որ կլանած է լինում եօթն աշակերտներին և կամենում է իւրեամ ևս կլանել, բայց Յովհաննէս Իմաստնասէրը աներկիւղ մօտենում է վիշապին այս խօսքերով «տեղդ ու տեղդ քար դարձիր ու ինչտեղ գաւազանովս տամ ջուր դուրս գայ» այս ասելով գաւազանով

*) Տես «Մշակի» 21

զարկուն է օձին, օձն իսկոյն քար է դառնում և գաւազանով տուած տեղից մինչև ցայսօր, ինչպէս վերև ասացինք, ջուր է բխում. իսկ եօթը աշակերտները, որ կլանել էր կիսակենդան դուրս են գալիս գաւազանով տուած տեղից, բայց շորտով վախճանվում են: Սոցա գերեզմանը ևս, ըստ ասելոյն գիւղացւոց, գտնվում է նոյն ժայռից փոքր ինչ հեռու:

Այս օձաձև ժայռի մօտ գտնուած լեռնից մի ճանապարհ հասնում է սորա մօտ, գիւղացիք ասում են՝ իբր թէ վերոյիշեալ ճանապարհը նոյն եկած ճանապարհն է, որի զարհուրանքից խօտերը վախել են և մինչև ցայսօր չեն դուրս գալիս… Բայց ի հարկէ խօտի չը դուրս գալու պատճառը նոյն լեռան վերա արածող կենդանիքն են, որք երեկոյեան ժամանակվերոյիշեալ ճանապարհով են վերադառնում գիւղը:

Յովհաննէս Իմաստնասէրից բաւականին հեռու գիւղացիք պատմում են՝ թէ կայ մի կնոջ արձան, ասում են իբր թէ այս կինը գլխին դրած մի անօթ (կովկիթ) կերակրով լիքն տանելիս է եղել իւրեանց գիւթանի համար, երբ տեսնում է վերոյիշեալ օձին, ահից սկսում է աղաղակել և օգնութիւն խնդրել, սորա ձայն է եղել մեր վերև յիշած ձայնը, որ Յովհաննէս Իմաստնասէրը լսել է: Յովհաննէս Օձնեցին օձին անիծելիս, անիծել է նոյնպէս նոյնկնոջը, (բայց ինչու այդ յայտնի չէ), որ գլխին կովկիթը դրած քար է դառնում:

Ցավում եմ որ չը կարողացայ ինքս տեսնել այս արձանը: Արդուի գիւղի արևելեան կողմը կայ մի սրբատած աւերակ եկեղեցի Կարմիր Վանք: Ասում են, իբր թէ Լեզգիք նոյն գիւղացիներից շատերին, որք ամրացած են լինում, կոտորում են սոյն եկեղեցում, և որոց արիւնը որպէս արուակ (արխ) հոսելիս է եղել և ահա այս պատճառաւ ստացել է Կարմիր անունը, այսինքն արիւնով ներկած: Բայց իմ կարծիքով Կարմիր անունը ստացել է այն պատճառաւ, որովհետև կարմիր գոյնի քարերից է շրջապատված:

Ռ. Ք.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Յուլիսի 16-ին

Մենք Շամոխու հայ հասարակութեան երիտասարդներս, վերջին ժամանակներում հաղորդակցելով մեր հայ լրագրութեան հետ, կարծես թէ մեր նամակներով կամենում էինք մեզ շրջապատող արենակիցների, թուրք և մալական ազգաբնակութեանց վրա յարձակվելով նոցա կեանքի անուղիղ ընթացքի մասին, նպաստամատոյց լինել նրանց մեր խորհուրդներով: Մենք յիրաւի ցոյց տւինք թէ նրանցից ոմանք, ունենալով իւրեանց ամբարներում բաւականին ցորեան, երբ աղքատ ժողովուրդը կարոտութիւն է զգում, էժան գնով բաց չեն թողնում նրանց, վերջիններին հարստահարելու դիտաւորութեամբ, թէ հասարակութիւնը, չը հասկանալով իւր օգուտը, չը պայմանաւորվեց պ. Բստրովի հետ նաւթի հորեր քանդելու համար, ծանօթացրինք թէ 50 կամ 60 մանէթ փողով դժուար է նոր բնակարաններ շինել քաղաքիս արևմտեան կողմում և դարձրինք սրա վերա կոմիսիայի

անդամների, որոնք գլխաւորապէս իսկ քաղաքացի են, ուշադրութինը, , ծանօթացրինք դատարաններում գործ ունեցող շատ պարոններին փաստաբանական նոր օրէնքների հետ, որով հին անկիրթ փաստաբանները էլ դեր չը պիտի խազային ու ի զուր շատ խեղճերի իրաւացի իրաւունքները դատարանում իրանց տգիտութեան պատճառաւ կորցնել տային, յիշեցինք նրանց թէ որքան վտանգաւոր և կորուստաբեր , դատարանում բեկերի կողմը անտեղի պաշտպանելը հողերի համար, չը մոռացանք զգուշացնել նոյն հասարակութեանը թէ հարկաւոր է նրան իւր հասարակական գործերը բարեխղճաբար վարելու համար, այդ յատկութեան ընդունակ մարդիք ընտրել, զգուշացրինք նրանց — հայերին չը հետևել թուրք և մալական ազգաբնակութեանց վատ օրինակներին և վերջապէս ամբողջ թուրք ազգաբանակութիւնը լիակատար խաւարասէր նկարագրելով, աղօթք արինք առ Աստուած, որ այդ ազգը վերանորոգի իւր կեանքը, անվերանորոգութիւնը կախուած է մոլեռանդ մօլլաներից… բայց չը կարողացանք, գոնեայ մասամբ էլ հասնել մեր նպատակին, ամենայն ցանկութիւն և աշխատութիւն իզուր անցան, ապարդիւն մնացին… չը հասանք մեր նպատակին այն պատճառաւ, որ մենք գրիչը ձեռքին վեր առնելով երբեմն չենք որոշում ճշմարիտը անճշմարտութիւնից, վատը լաւից, հետևանքը պատճառից, որ ժողովուրդը, որի համար գրում ենք լաւ հասկանայ իրան կարիքը: Օրինակի համար թուրք ազգութեան յետադիմութեան մէջ մենք մեղադրում ենք միայն մօլլաներին, որոնցից շատ շատերը չէ թէ կշտամբում են իրանց չը լսող հարուստներին, բայց և մօլլաները անձամբ անձին իւրեանց ծխական ժողովրդի աչքին համարումն չունենալով իրանց անընդունակութեան պատճառով, ժողովրդի մտաւոր կենցաղաւարութեան վերա ոչինչ ազդեցութիւն չունեն և սորան
թող ներվի մեղ ապացոյց բերել մօլլաների այն խնդիրները, որոնցով Բարձրագոյն հաստատած նոր կանոնադրութեան համաձայն ծխական, ինչպէս մեր հայոց քահանաները, նշանակված մօլլաները խնդրում են ազատ համարել նրանց մօլլայական պաշտօնից: Ուստի ամբողջ թուրք ազգի յետադիմութեան համար մարդկութեան առաջ յանցաւոր համարելով ոչ միայն մօլլաներին այլ և ոչ սակաւ կրթուած հարուստներին, որոնք միայն իւրեանց սրտի ցանկութիւնը և փափակը առնելու համար են ջանք անում, կաշխատեմ, եթէ ժամանակս ների, ծանօթացնել ընթերցողին հանգուցեալ Միրզայ Նասրուլլայ բէկ Գուրբան Բէկովի մի քանի վիպասանական յօդուածների հետ, որոնք ցոյց են տալիս թէ մօլլաները և նրա ժամանակ, որ աւելի քան այժմ յարմար ժամանակ էր, ոչինչ ազդեցութիւն չեն ունեցել ժողովրդի մտաւոր կեանքի վերա: Ուրեմն նշանակում է որ այդ ազդեցութեան համար էլ հարկաւոր են բարեխիղճ հարուստներ, որոնք փոքր ինչ ճանաչելով ուսման կարիքը, դառնան իւրեանց ուսումնաւարտ երիտասարդներին և ասեն թէ՝ «մեր միտքը մեծ է և հարուստ, բայց ոչ կայ նրանում կանօնաւորութիւն, եկէք ու մշակեբէք նրան…»

Ա. Մէլիք-Շահնազարեանց

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Անշարժ նստել, հասարակական վնասներին չը ցաւել և նրա կարիքները չը հոգալ, մեռելութեան նշան է… գործենք քանի մեռած չենք, աշխատենք քանի բերաններումս չունչ կայ, զարկ տանք հասարակութեան անշարժութեանը, հարուածենք նրա պարասութիւնները, անհետացնենք այն ամեն թերութիւնները որ առատօրէն վայելում ենք. աշխատենք բարոյականութեամբ զարգացնել մեր մտքերը որ ժամանակաւ իւրաւունք ունենանք դասուել լուսաւորված ազգերի շարքում, սոքա մենք պարտաւոր ենք կատարել քանի կենդանի ենք, իսկ երբ կը մեռնենք՝ թող թաղեն մեզ գետնի տակ, ուզում են այրեն մեր մարմինները, ուզում են դեն գցեն, փոյթ չէ. մենք մեր պարտաւորութիւնը կարողութեան չափ կատարած կը լինենք:

Մենք ամօթ չը պիտի համարենք մեր ներքին հիւանդութիւնները յատնել բժշկին, որովհետև հիւանդ ենք . իսկ հիւանդին հարկաւոր է ասել իւր ցաւը նո նրա համեմատ ընդունէ ճար, դարման… Մենք չը պիտի վարագուրենք նախապաշարուած հնամօլ մարդերի շնորհիւ մեր մէջ յաճախակի գործվող անախորժ դէպքերը, մի և նոյն ժամանակ չը պիտի վնասենք այդ գիշերասէր պառաւների մեր դէմ արձակած ափեղցփեղ խօսքերով և անվայել հայհոյանքներով որովհետև մեր կատարեալ ցանկութիւնն է հանել մեր միջից այն բոլոր մօլութիւնները և ազգավնաս ախտերը, որոնք ցաւօք սրտի պիտի ասենք արմատացած են մեզանում. և մեր այս բարի
նպատակին հասնելու միակ միջոցն է աշխատանք, երկար ու տոկուն աշխատանք. հարկաւոր է ամենատեսակ չարչարանքներ կրել. հնութինը, նախապաշարմունքը մտրակել. մտցնել մեր մէջ նորութիւնը և ժամանակի պահանջմանց համեմատ յառաջ խաղալ: Կան մեր մէջ շատերը, որոնց վրա մեծ պարտաւորութիւն կայ դարսած, որոնք նշանաւոր դեր պիտի կատարեն հասարակական կեանքի մէջ, որովհետև նրանց ձեռքին է հասարակական կեանքի ղեկը, ուրեմն նրանցից է կախված մեր լուսաւորութիւնը և մեր կեանքի ապագայ բարօրութիւնը. բայց տարաբաղտաբար դոքա հներ են, դոքա այն հին բթամիտներն են, որոնց մէջ դեռ թագաւորում է այն ատելի ու խայտառակ եսը. դոքա այն անհոգ ու անտարբեր մարդիքն են որոնք ազգի շահերը մի կօպէկի են նուիրում. և վերջապէս դոքա այն խաւարասէր ուրուականներն են, որոնց պակասութիւնները երեսներին ասելիս կատաղում են, փրփրում են և հազար տեսակ անէծքներով ու հայհոյանքներով են մխիթարում իրանց սրտերը. ողորմելի մարդիկ:

Վեր առնենք օրինակի համար մի փոքրիկ աննշան քաղաք: Ղուբան. որտեղ չը կայ հասարակական կեանք, ուրեմն և ձգտումն դէպի լուսաւորութիւն. բայց տեսէք տգիտութիւնը ինչեր է անում այդ քաղաքի հարիւրտուն հայ բնակիչների մէջ.

եսականութիւնը փակում է դպրոցը. անհոգութիւնը կլանում է եկեղեցական դրամը: Մեր դպրոցի փակման առիթով մենք չենք կարող չը յայտնել տեղոյս հայ հասարակութեան արդի թշուառ դրութիւնը, իսկ միւս կողմից չենք կարող չը յայտնել մեր զզվանքը դպրոցի այն միամիտ հոգաբարձուաց, որոնք ոչինչ չարած, կարծում են թէ շատ են արել և ալսօր փողոցներում բղաւում ենմիմեանց գլուխ են ջարդում ու փոխանակ փաստերով հերքելու իրէնց դէմ գրածներին, երեխայական դատարկ յիշոցներով ու աննշան անէծքներով են արտահայտում իրենց մտքերը. ապացոյց նոցա գործունէութեան թող լինի դպրոցը, որ քանի մի ժամանակ առաջ փակված էր:

Մի՞թէ ամօթ չէ մեզ համար պարոննե. Միթէ չենք կարդում ամեն օր լրագրերում թէ այս ինչ քաղաքում հիմնուեց այս ինչ դպրոցը, ընթերցարանը, այս ինչ գիւղում հիմնուեց այս ինչ ընկերութիւնը և այլն և այլն. եթէ ոչ քաղաքները, գոնէ գիւղօրայքը թող մեզ նախատինք լինեն, մենք մեզ օրինակ վեր առնենք այն կոպիտ ու ռամիկ գիւղացիներից, որոնք անդադար աշխատում են ուսումնարաններ, ընկերութիւններ և շատ տեսակ բարենպատակ հիմնարկութիւններ. մի խօսքով նրանք մրցում են իրենց տգիտութեան հետ, բայց մենք մեր ունեցածն էլ ոչնչացնում ենք: Տխուր տեսարան…

Դպրոցի փակման առիթով եկած էր այստեղ Ծամախու թեմի տեսուչ (թեմական տեսուչ) Սահակ վարդապետը, որն տասն օրից աւելի մնալով շատ թէ քիչ ապահովացրեց (կիսով չափ) եկեղեցական գումարի թշուառ վիճակը, և բացեց դպրոցը. ընտրուեցան նոր հոգաբարձուներ ուսումնարանի (6 անձինք) որոնցից
երկուսը ինչպէս լսում ենք չեն կամենու այդ պաշտօնը վարել և սպասում են հաստատութիւնը գալուց յետոյ հրաժարական տան… ցանկանում ենք երկարատևութիւնը այդ ուսումնարանին, բայց կասկածում ենք ապագայում, որովհետև նրա նիւթական դրութիւնը շատ անմխիթար է:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

***

Լոռուց գրում են մեզ, որ մայիս ամսին վախճանվեցաւ Լոռու գաւառում մի շատ հարուստ և իր հայրենակիցներին իր բարեգործութիւններով յայտնի անձն. — Պապա Քալանդարեանը:

***

Նոյն տեղից գրում են մեզ որ լոռցիք լսելով որ երկաթուղին, որ պէտք է շինվի դէպի անդրկովկասեան հարաւային գաւառները, Լոռու գաւառի միջով պիտի անցնէ անհամբերութեամբ սպասում են որ ստուգվի այդ իրանց համար ուրախալի լուրը:

***

Ճամախուց մեզ գրում են, որ այս տարի ազգային ուսումնարանների հարցաքննութիւնները շատ անաջող են եղել: Թեմական դպրոցի աշակերտաց այս տարվայ հարցաքննութիւնը ոչինչ առաջադիմութիւն չը կարողացաւ ցոյց տալ: Սորա հոգաբարձուներն էլ շատ անհոգ են այդ մասին, վարժապետները անում են ինչ որ ուզում են: Օրիորդաց ուսումնարանը անցեալ տարուց շատ յետադէմ էր, սակայն այս յետադիմութիւնը անտես առնելով, յարգելի հոգաբարձուք աւելի ուշադրութիւն դարձրին հրապարակական հարցաքննութիւնների փառաւոր անելու վրա. նրանք երգել տուեցին աշակերտուհիներին հանդիսականների ներկայութեամբ, յետոյ լօտարէա (վիճակախաղ) սարքեցին բայց այնու ամենայնիւ հարցաքննվողների թուլութիւնը վատ տպաւորութիւն թողեց:

***

Շաբաթ, օգոստոսի 2-ին Թիֆլիսի ամառային թատրօնում հայ և ֆրանսիացի թատրօնասէրները տուին մի կօնցէրտ — ներկայացումն Տուլուզ քաղաքի հեղեղից վնասվածների համար: Մենք պարտք ենք համարում համակրութիւն յայտնել մեր դերասանական ընկերութեանը, որ նա միշտ մասնակցել է այդպիսի մարդասիրական գործերին: Կը յիշեցնենք ընթերցողին և այն ներկայացումը, որ նոյն դերասանական ընկերութիւնը սուեց յօգուտ Ճամախու երկրաշարժից վնասվածներին: Մօլիերի «Ստիպված ամուսնութիւնը» խումբը լաւ էր ընտրել որովհետև մի ուրիշ գրվածք ֆրանսիացիներին անհասկանալի կը լինէր: Ինչ կը վերաբերի վօդըվիլի ներկայացմանը, այսքանը կասենք, որ տ. Սաթինիկ և պ. պ. Չմշկեան և Աւալեան իրանց գեղեցիկ խաղով շատ լաւ տպաւորութիւն արին թէ մեզ վրա և թէ ֆրանսիացի այցելուների վրա: Երկրորդ վօդըվիլը ֆրանսիերէն լեզուով նոյնպէս շատ գեղեցիկ գնաց: Բայց ցաւում ենք, որ այցելուների թիւը փոքր էր և մեր կարծիքով այն պաըճառով, որ Թիֆլիսի մեծ մասը ամարանոց է գնացել:

***

Լսում ենք, որ Վերին-Ազուլիսում հիմնվում է մի բարեգործական ընկերութիւն: Ի բոլոր սրտէ յաջողութիւն ենք ցանկանում նոր կազմուող ընկերութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Բավարիայում ընտրութիւնները մեծ աղմուկով անցան: Կուսակցութիւնների պատերազմը մեծ էր: Կղերականները գործում էին ազատութեան անունով, բողոքում էին բացարձակապէս Պրուսիայի ազդեցութեան դէմ: Միւնխընի տների պատերի վրա նկատվում էին ընտրութիւնների ժամանակ անթիւ յայտարարութիւններ,որք խօսում էին պրուսական զինուորական բռնաւորութեան վրա, նրա անբարոյականացնող ազդեցութեան և շողովրդի հարստահարութեան վրա: Այդ անցքերի մասին ծանօթանալ ցանկացող ընթերցողին խնդրում ենք նոյնպէս ուշադրութիւն դարձնել և ներկայ համարում տպված Գերմանիայի նամակի վրա: — Գերմանական „Frankfurter Zeitung“ լրագիրը հրատարակեց նորերումս երևելի Կարլ Ֆօխտի մի յօդված, որտեղ նա սաստիկ յարձակվում է Գերմանիայի բռնած այժմեան քաղաքական և հասարակական ընթացքի վրա: Ֆօխտը. Ինչպէս յայտնի է, ինքն ազգով գերմանացի է, բայց վաղուց է Ծվեյցարիայումն է ապրում, և և կարծեմ շվեյցարական քաղաքացի է: Նա Ժընէվի համալսարանի ռէկտօր է: Յիշեալ յօդվածի մասին ուրիշ անգամ կը խօսենք:

ՍՊԱՆԻԱ

„Köln Zeitg.“ լրագիրը հաղորդում է որ սպանիական տէրութիւնը Ֆրանսիայում եղած իր դէսպանի միջոցով քանի մի բացատրութիւններ պահանջեց ֆրանսիական կառավարութենից, որովհետև Ֆրանսիան թոյլ տուեց որ կարլօսեան զօրքի գեներալ Դօրրէդարայ անցնէր ֆրանսիական սահմանը: Սպանիական տէրութեան կողմից
Արած այդ հարցմունքներին Բիւֆէ պատասխան է տուել որ նրան այդ մասին ոչինչ յայտնի չէ և խոստացաւ տեղեկութիւններ հաւաքել: Հեռագրով հարցմունք անելով Սպանիայի սահմանի վրա գտնվող նահանգի պրէֆէկտից, պատասխան է ստացելայդ վերջինից, իբր թէ ֆրանսիական հողի վրա գեներալ Դօրրէդարայի ներկայութիւն բոլորովին անհիմն է:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Ստրասբուրգ. 26-ին Յուլիսի

Բէրլինի Norddeutsche Allg. Ztg. Իր նախագուշակութիւնների մէջ զարմանալի դժբաղդութիւնների է հանդիպում: Իբրև բայխսկանցլէրի, պ. իշխ. Բիսմարկի գործիք կարելի էր սպասել, որ նա աւելի ճիշդ տեղեկութիւններ ունենար քաղաքական հարցերի մէջ: Ծիծաղելին այն է որ մի սուտ կամ հնարած լուր տարածելոց յետոյ երբոր յայնվում է նորա հաստատածի անհիմն լինելը, լրագիրը ամենաերեխայական, ամենամիամիտ միջոցներով է աշխատում իրան արդարացնել հասարակական կարծիքի և լրագրութեան առաջ:

Անցեալ նամակներիցս մէկի մէջ կարծեմ յիշել էի, որ այս կիսապաշտօնական լրագիրը մի նոր պատերազմի մասին լուր տպելուց յետոյ և ամբողջ լրագրութիւնից

խայտառակվելուց յետոյ, իրան նորանով էր արդարացնում, որ հասարակութիւնն է մեղաւոր, և ոչ նա, որ հաւատացել է տպած լուրերին!!… Այսպիսի կերպ իրան արդարացնելու ոչ միայն կիսապաշտօնական այլ և ոչ մի լրագրին ներելի չէ: Ժողովուրդը մի խաղալիկ չէ, որին մի նշանաւոր լուր յայտնելուց յետոյ, որ նորա ոչ միայն բարոյական հանգստութեան այլ և նիւթական ապահով դրութեան և հասարակական յարաբերութիւններին է վնասում, կարելի լինէր մի քանի օրից յետոյ ասել՝ «ես միայն հանաք արի, ո՞ւր էիր միամիտ կերպով հաւատում իմ խօսքերիս»…

Նորերումց նոյն յարգելի լրագիրը կրկին մի այս տեսակ լուր տարածեց, որ ինքն ըստ իրան անմեղ կը լինէր, եթէ ինքն լրագիրը չը քաղէր այդ լուրից նշանաւոր հետևանքներ:

Ահա՛ ինչումն է հարցը: Յայտնի է որ Գերմանիայի գաւառներից ամենամոլեռանդ կղերական ուղղութեան հետևում է Բաւարիա, որ այդ գաւառում կղերական կուսակցութիւնը միշտ ձայների բազմութիւն էր վայելում ներկայացուցիչների պալատի մէջ: Այս տարվայ սեսսիան վերջանալով գարնանը, այժմ նոր ընտրութիւններ պիտի լինէին: Nordd. Allg. Ztg. Երևի ազատամիտ կուսակցութեանը աւելի եռանդ և ոյժ տալու համար, լուր է տպում (ընտրութիւնները դեռ վերջացրած չէին) որ Բավարիայի թագաւորը պիտի հանդիպի գերմանական կայսրին նորա ճանապարհորդութեան ժամանակ:Ինչպէս ասացի այս լուրը ինքն ըստ

Ինքեան անմեղ կը լինէր, բայց լրագիրը աւելացրեց և իր մեկնութիւնները՝ «երկու թագաւորների իրար հետ տեսնվելը ապացոյց է որ Բավարիայի երիտասարդ թագաւորը համակրում է կայսրի կառավարութիւնից բռնած ընթացքին ընդդէմ կղերական կուսակցութեան: Երկու թագաւորների իրար պատահելը նոր ոյժ կը տայ ազատամիտ կուսակցութեան, որ երևի յաղթող կը հանդիսանայ ընտրութիւնների մէջ»:

Այսքան գեղեցիկ խօսքերից յետոյ ի՞նչ է լինում՝ կայսրը անցնում է Բավարիայով, իսկ Լուդովիկ իր Հոհէնշվանգաու ամրոցումը նստած տեղից չթ շարժվում կայսրին բարևելու համար, և միայն թագաւորի եղբայրը պատահում է կայսրին Միւնխէնի երկաթուղու կայարանում:

Եթէ կիսապաշտօնական լրագիրը իր մեկնութիւնները տպած չը լինէր, ոչ ոք այս անցքի մասին չէր խօսի՝ Գերմանիայում սովոր են Բավարիայի թագաւորի առանձնութիւնների և ոչ խօսակցութեան ոչ լրագրութեան մէջ չեն ծածկում պարզ կարծիկ յայտնելու այս զարմանալի բնաւորութեան վերա: Բայց Nordd. Allg. Ztg. թագաւորների տեսութիւնից նախագուշակելով ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը — տեսակցութիւնը չը լինելուց յետոյ ի հարկէ կղերականները գլուխը բարձրացրին իրանց կողմից մեկնութիւններ հրատարակելով՝ թէ Լուդօվիկ իր ամրրոցի մէջ մնալով ընդ հակառակ ապացուցեց որ բոլորովին չէ համակրում ազատամիտներին, որ ժողովուրդը

թագաւորի կամքին համապատասխան կը վարվի եթէ քանի կարելի է շատ ներկայացուցիչներ կընտրի կղերական կուսակցութիւնից և այլն և այլն:

Այժմ ընտրութիւնները վերջացան և ազատամիտները կարող են գոհ լինել, որ հետևանքը այնքան անյաջող չեղաւ իրանց համար. կղերականները ունեն մի ձայն աւելի քան ազատամիտները, այնպէս որ բազմութիւնը դժուար է ասել որ կողմ կը լինի վճիռների ժամանակ:

Ա. Արծրունի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Երևանից, որ նորա նահանգում շրջում է Պարսկաստանից եկած մի թուրք, որը իրան աչքի բժիշկ անուանելով լցնում է իւր գրպանները միամիտների փողերով և հիւանդներին չէ օգնում: Վատ չէր լինի այդպիսի անձերին կալանաւորել և շուտով իւրեանց հայրենիքը ուղարկել:

***

„Тифл. Вестн.“ լսում է, սուդեբնի պրիստավ Լ. Ռէվօլվերով վիրաւորել է հասարակական այգի պահող մի կնոջ: Վերքը վտանգաւոր չէ:

***

Նոյն լրագիրը լսում է, որ մի զինուորական աստիճանաւոր կամեցել է ինքնասպանութիւն գործել, բայց չէ յաջողուել:

***

Մեզ պզտմում են հետևեալ անհաւատալի լուրը Ք… գիւղի մի բնակիչ, տեսնելով որ իր կինը ծննդեան օրերի վրա է, նախապէս պարզ յայտնում է նորան, որ եթէ աղջիկ ծնանելու լինի, նա իսկոյն աղջկան սպանելու է և թոյլ չէ տալու կնոջը տուն գալ, իսկ եթէ արու զաւակ ծնանելու լինի, ապա ինչպէս ինքը կինը, նոյնպէս և նորածին որդին, արժանի կը լինեն իր համակրութեանը: Կինը հաւատ չէ ընծայում իր մարդու խօսքերին, կարծելով թէ նա հանաք է անում: Երբ լրանում է ժամանակը տարաբաղդաբար աղջիկ է ծնում, մարդը չարաչար պահանջում է իր կնոջից աղջկան սպանումը, բայց մայր-կինը չէ կարողանում յօժարվել այդ յանցանքի կատարելուն, այն ժամանակ մարդը ինքը երեք օրական խեղճ զոհին սպանում է:

***

Պարսկաստանի Ռաշտ քաղաքից մեզ գրում են հետևեալը՝ Ռաշտում գտնված հայ վաճառականների մեծ մասը բաղկացած են երիտասարդներից, որոնց ծնողները այն նպատակով են ուղարկած այդտեղ, որ այդ երկրում դրանք կարողանային հեռու լինել շռայլութենից, որին իբր թէ պիտի նուիրվել էին Ռուսաստանի կամ Եւրոպայի մի մեծ քաղաքում. բայց դժբաղդապէս այդ նպատակին բոլորովին չեն հասնում մեր հեռատես ծնողները: Ընդհակառակն բնակվելով շարունակ պարսիկների անկիրթ և անբարոյական շրջանում, այստեղի հայերը ընդունեցին այդ շրջանին սեփական բոլոր աննախանձելի յատկութիւնները:

***

Կ. Պոլսի մէջ հրատարակվող բողոքական հայոց օրգան «Աւետաբեր» լրագիրը ասում է՝ «Թուրքիայ մէջ բողոքական հայք իրենք բողոքականութեանը համար չեն մոռանար թէ հայ են, ոչ ալ նուազ կը սիրեն իրենց հայ ազգը, կամ նուազ կը պարծին իրենց ազգային պատմութեամբ: Արդարև անոնք պիտի չը բաժնուէին Հայաստանեայց Եկեղեցիէն, ոչ ալ զատ քաղաքական մարմին մը պիտի ըլլային, եթէ կրօնական ազատութիւն շնորհուած ըլլար անոնց»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից նոր լոյս տեսին և վաճառվում են Վարդանեան և ընկ. գրախանութում.

1. Տէր-Յակոբեանց — Աղօթագիրք Հայ դպրոցների համար դ. տպ. գինն է 7 կ. տասից աւել գնողներին 6 կ.

2. ,, Учебник Рус. языка (Դասագիրք Ռուսաց լեզուի) բ. տպ. նշանաւոր փոփոխութեամբ և բառարանով գինն է 60 կ. տասից աւելի գնողներին 55 կ.

3. Եւտուշևսկի Ժողովածու թուաբանական խնդիրների մ. ա. բ. տպագրութիւն թարգ. Մ. Սիմօնեանցի 40 կ. տասից աւել գնող. 43 կ. 100 օրինակ գնողներին 35 կ. ա. տպագրութեան գինն էր 60 կ.

2 (2)

Յայտնվում է պատուելի վաճառականներին որ մեր գործարանը, որ պատրաստում է զանազան փրփրող խմիչքներ և զանազան մրգերից ԼԻՄՕՆԱԴՆԵՐ, երկար տարիներով ստացել է ընդհանուր յարգանք Նօվօրօսիյսկի նահանգում և խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գների վրա, որը անհամեմատ նուազ են Մօսկվայի գործարանների գներից և ձեռնտու են Կովկասեան աենողներին, թէ գնի, թէ ճանապարհի ծախսի կողմից:

Մի և նոյն ժամանակ մենք պէտք է նկատենք, որ մեր մրգերի ԼԻՄՕՆԱԴՆԵՐ. Պատրաստուած լինելով ամենանոր եղանակով, չեն ենթարկվում որ և է փչանալուն թէ ճաշակի կողմից թէ գոյնի կողմից ամբողջ տարվայ ընթացքում և աւելի, որով տրվում է պ. պ. առնողներին մի միջոց ունենալ իրանց մօտ այդ զօվացուցիչ խմիչքների բաւական մեծ պաշար, առանց երկիւղ կրելու որ փչանան:

Գները մրգերից շինած լիմոնադներին՝ Կեռասի, Վարդի, Մօրիի, Վանիլիի, Նարինջի, Տանձի և Անանասի, — 12 կօպ. մի կէս շամպայնանոց շիշի համար և 7 կօպ. մի բաժակ պարունակող շիշի համար:

Ամանի համար վերցնվում է՝ առաջինի համար 7 կօպ., իսկ երկրորդի համար 5 կօպ.:

Պատուէրներով խնդրում ենք դիմել մեր ֆաբրիկա ՕԴԷՍՍԱՅԻ մէջ Կօբլէվսկի փողոցում, Վօրօնիչի տանը (Одесса, Коблевская улица, домъ Воронича) կամ պ. Կ. Ի. Տիսէնին Թիֆլիսում, որտեղ կարելի է ստանալ և մեր լիմօնադների օրինակներ: 9(10)

Շուտով լոյս կը տեսնի մի նոր վիպասանական հեղինակութիւն «ԷՐԿՈՒ ԹՈՒՄԲ գետ ԽԵՂՃ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ» անունով:

Այս գրքի բովանդակութիւնը նուիրված է գիւղական կեանքին և գրուած է բոլորովին գիւղական բարբառով և մատչելի կացուցած ընթերցողին մի ջոկ բառ-գրքոյկով, որը յաւելացրինք գրքի վերջում: Աչքի առաջ ունենալով քանի մի հանգամանքներ, մենք բացեցինք ստորագրութիւն պ. պ. Եփրեմ Ծատուրեանի լամպերի մագազինում, Զաքարիայ տէր Գրիգորեանի գրատանը և Համբարձում Էնֆիաճեանի ծխախոտի մագազինում, որի համար և խնդրում ենք
Հասարակութիւնից (առաւել հեգեւորականներից) չը խնայել կամաւոր դրամական օգնութիւն: Գրքի գինը 20 կ. է: Ստորագրվողների անունները կը տպվեն գրքի վերջում և նորանցից ամեն մինը կը ստանայ այնքան օրինակ, որքան ինքը յառաջուց բարեհաճել էր:
Աղէքսանդր Արարատեանց
1875 ամի յուլիսի 15 2(3)

«ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ ԵՒ ԼՈՅՍԻ ՄԱՍԻՆ» ծախվում է „Մշակի“ խմբագրատան մէջ, պ. պ. Ալեքսանդր Շահազիզեանի և Աւետիք Էնֆիաճեանցի գրավաճառանոցներում, նոյնպէս փոխադրողի մօտ այս հասցէով՝ чрезъ Ахалцихъ въ г. Ахалкалаки Баграту Пичикянцу. Գինն է 25 կօպէկ:

1(2)

Խմբագրութիւն ԴՊՐՈՑ ամսագիր

Մանկավարժական ամսագիրն Դպրոց անցեալ յունիս ամսում լրացրեց իւր առաջին տարին № 11 և 12 տետրակով և սոյն յուլիսից 1875 ամի սկսում է երկրորդ շրջանը: Մեր ամսագիրը անփոփոխ պահում է իւր ծրագիրը, ուղղութիւնը, բաժանորդագինը և բոլոր պայմանները: Միամեայ փորձառութիւնից յետոյէ աշխատելով հեռացնել մի քանի պակասութիւնները՝ Դպրոցը յոյս ունի առաւել ևս գրաւել ընթերցող հասարակութեան և մանաւանդ ազգային ուսումնարանների և նոցա հոդաբարձուների տեսուչների և աշակերտների սէրը, համակրութիւնը և ուշադրութիւնը:

Խմբագրութիւնս խնդրում է բաժանորդ լինել ցանկացողներից նախ՝ ամենայն ճշտութեամբ յայտնել հասցէնը, և երկրորդ՝ անպատճառ կանխիկ վճարել բաժանորդագինը, առանց որոյ ոչոքին չենք ուղարկի մեր ամսագիրը:

Խմբագիր — Հրատարակիչ

Վահան վարդապետ Բաստամեանց

ПОЛУЧЕНО

и поступило въ продажу во всехъ книжныхъ магазинахъ сочиненіе:

„По вопросу о выпуске банкивыхъ нотъ и о крупныхъ привилегированныхъ банкахъ, БАНКОВЫЙ АКТЪ РОБЕРТА НИЛЯ 1844 ГОДА“ — П. Гамбарова, Спб 1875 г. Цена 2 рублря. 10(10)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Եթէ մենք մի հայացք գցենք դէպի անցեալը, նայենք և քննենք ներկան, մենք կը տեսնենք, որ մարդկութեան մէջ զանազան յեղափոխութիւններ, թէ դէպի լաւը և թէ դէպի վատը ըստ մեծի մասին առաջ են եկել հացի խնդրից, եթէ այսպէս կարելի է ասել՝ փորից:

Այս իմ խօսքի ճշմարտութինը նրանով է ստուգվում, որ ապացուցված է, թէ ինչպէս ազգերը, նոյնպէս և մասնաւոր անհատները աշխատում են միմեանց խեղդել, իրանց ապրուստը բարւոքելու համար…

Շատերը ճձի նման սողում են սորա կամ նորա ոտների տակ իրանց նպատակին հասնելու համար: Շատերը իրանց բոլոր սուրբ նպատակները զոհում են մի կտոր հացի համար: Մարդը անդադար պատերազմում է մարդի հետ, միւս կողմից և բնութեան հետ իր ապրուստը ճարելու համար:

Ով է հարկադրում օր ու գիշեր երկրագործին արօրը ձեռին ակոսել գետինը, ո՞վ է հարկադրում մշակին տնքալով տանել օտարի բեռները, — եթէ ոչ փորը, այդ անխնայ տէրը, որ հարկադրում է աշխատել և անդադար աշխատել… նա իբրև անխոնջ

վերակացու մարդի վրա, հարկադրում է նորան ամեն բան անել, միայն որ իրան, այդ անկուշտ տիրոջը բաւականութիւն տայ:

Եթէ լաւ նայենք մեր չորս կողմը, մենք այս պատերազմը կը տեսնենք ամեն քայլում: Եւ ոչ թէ միայն այս պատերազմը լինում է մարդիկների իրանց մէջ, բայց և բոլոր կենդանիների մէջ:Օրինակ դուք աշխատում եք հողից ստանալ ձեր քրտինքի վաստակը, — մի բուռն ցորեն՝ ինչքան աշխատող կայ այդ մի բուռ ցորենից որքան կարելի է ամենամեծ բաժին հանել իր համար: Մուկը փախցնում է, թռչունները նոյնպէս օգուտ են քաղում անխնայ՝ ես այստեղ չեմ յիշում այն երկու ոտնանի մկներին, որք նոյնպէս շտապում են խլել ցորենդ…

Բայց այդ քո ցորենի թշնամիները՝ մկները, թռչունները և այլն, նոյնպէս լինում են կերակուր այս և այն կենդանեաց և այլն և այլն:

Այսպէս ական նման բոլոր բնութիւնը անդադար պտտվում է, ապրում է , — բոլորը միանում է մի կէտի մէջ՝ այն է փորի պահանջը: Մարդ, շուն, գայլ, թռչուն և
այլն, — բոլորն էլ այս թէ այն ձևով աշխատում են, պատերազմում են միմիայն, իրանց գոյութիւնը պահպանելու համար, իրանց փորը լցնելու համար:

Ով է մարդկութիւնը հարկադրում դէպի առաջադիմութիւնը, դէպի մշտական գորունէութիւնը, եթէ ոչ ուտելու պահանջը:

Մենք տեսնում ենք թէ որտեղ ապրուստը հեշտ է, այնտեղ մարդիկ առաւել տգիտութեան մէջ են, ուրեմն մարդը կամայ ակամայ իր փորի ներգործութեան տակն է գտնվում: Դուք ինքներդ նկատած կը լինէք, ինչպէս քաղցած մարդը ուտելուց առաջ ունքերը կիտած, ճակատը կնճռնած, անհանգիստ, բարկացած, վատ դրամադրութեան մէջ է գտնվում, — և ինչպէս մի և նոյն մարդը լաւ ճաշից յետոյ, ժպիտը երեսին, քաղցր դէմքով հանաքներ է անում և ծիծաղում: Մինչև անգամ ամենաչար գազանը բարի և անվնաս է դառնում, երբ որ նրա փորը մարսողութեան գործողութեան մէջն է գտնվում: Նա որ քաղցած է, զգում է ինչ բան է սովատանջ լինել նա որ իր կեանքում փորձել է անցկացնել դատարկ փորով մի քանի ժամանակ, նա կը հասկանայ ինչ դժոխային տանջանք է քաղցած լինել: Ուրեմն փորն է այսքան երևոյթների պատճառը:

Եթէ մենք նայենք մարմնի այս անդամի վրա մարմնակազմական հայացքով, կը տեսնենք որ ստամոքսը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մսից շինած տոպրակ երկու կողմից ծակ, մի կողմը բերան, որտեղից ստանում է կերակուր, իսկ միւս կողմից աղիքներ, որք ստացած կերակուրը մարսում են և ընդունելով մարմնի արիւնի խողովակների մէջ, որոնք տարածվելով տալիս են հիւթ և սնունդ բոլոր մարմնի էութեանը: Ինքն ստամոքսը ընդունելոն մեծ քանակութեամբ կերակուր, շատ քիչ է ստանում իր ապրուստի համար առանձնապէս: Ուրեմն ստամոքսին ինքն ըստ ինքեան շատ բան չէ հարկաւոր, նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ծառայ ընդհանուր մարմնի: Ստամոքսի մէջ զանազան հիւթեր են

թափվում բերանից և դուրս են գալիս, ինչպէս ասացի, արիւնի խողովակների մէջ, նրա միջի կողմի երեսից: Այս ջրային հիւթերը ունեն թթուած յատկութիւն, և օգնում են կերակուրի մարսողութեան: Իսկ երբ որ ստամոքսը դատարկ է, այս հիւթը բորբոքվում է և զարթեցնում է այն ճմլող զգացմունքը, որ մենք ասում ենք ախորժակ (իշտահ) երբ փոքրն է, քաղծածութիւն, երբ մեծ է, իսկ սով կամ կարելի է ասել կատաղութիւն, երբ այդ ճմլող, քերթող, կտրատող զգացմունքը սաստիկ է:

Ստամոքսը այս չարաչարզգացմունքներով ցոյց է տալիս իւր տիրոջը, որ բոլոր մարմինը կարօտ է կերակուրի. այստեղ նա կատարում է անխոնջ ազդարարուի պաշտօնը: Մարդը և առհասարակ բոլոր շնչաւոր և անշունչ արարածները գոյացած լինելով անթիւ գնդակներից (клетки), որոնք ունենալով զանազան յատկութիւններ, կատարում են զանազան պաշտօններ: Մեր խօսակցութիւնը լինելով առաւել

Ծնչաւորների, և մանաւանդ մարդի վրա, կը տեսնենք որ նորա այդ մանր գնդակները ստանալով առանձին յատկութիւն, բաղկացնում են ոսկոռները իբրև պինդ մասներ, միսը և ուղեղը, իբրև ձգտուն փափուկ մասներ: Գոյանալով մի այլ կերպիւ նոքա բաղկացնում են պլօճիկներ, լեարդն և այլն, որոնք նոյնպէս ծառայում են մարմնին, առաջինը հեռացնելով արդէն մաշուած մասները մարմնից, իսկ երկրորդը կազմելով այնպիսի հիւթ, որ աղիքներում օգնում են կերակուրի մարսողութեանը: Այսպէս բոլորն ստանում են կերակուր, որ պահպանեն անհատի գոյութիւնը ընդհանրապէս. բայց բոլոր մարմնու առանձին մասերը ունեն իւրեանց առանձնակի գոյութիւնը, նոյնպէս բոլոր մասների կամ անդամների մէջ ամեն մի փոքր գնդակ ունի իւր կազմակերպութիւնը, իւր կեանքը, կերակուրը և հարկաւորութիւնները: Երրորդ մարմինը մի որ և է պահանջ է զգում, զգում են բոլոր անդամները և նոցա միջի անթիւ գնդակները: Նոքա անդադար գործի մէջին, անխոնջ աշխատում են ծառայել անհատի ընդհանուր էութիւնը պահպանելու համար, նոքա անդադար պէտք է նորոգուեն, որ ապրեն ու գործ կատարեն, որ կարողանանապրեցնել մարմինը: Այս գնդակների ապրուստը ստացվում է կերակուրից: Ինչ է պատահում այն կենդանուն, որ միջոց չունի մարմնու մասումքները նորոգելու կերակուրով, — դուք ինքներդ կարող էք երևակայել. օրինակ քաղցած կենդանին սկսում է անհանգիստ լինել, այս կողմ այն կողմ ընկնել. վերջապէս կատաղել և վերջ ի վերջոյ թուլանալ և անզգայ վեր ընկնել: Մի և նոյնը պատահում է և քաղցած մարդին, նորա քաղծածութեան աւելանալու հետ անդադար անհանգիստ է լինում, փեռները և ոտները սկսում են դողալ, էլ չէ կարողանում ոչինչ բանի վերա մտածել, աչքերն խոր ընկած երբեմն աննպատակ շրջում են դէս ու դէն, երբեմն անբնական փայլում են ու շուտով էլի հանգչում: Երեսի գոյնը թռած, բերանից գնում է թուքը (слюна), երբ ուտելու բան տեսնում է կամ մտածում է կերակուրների, կամ մի կտոր ցամաք հացի վերա: Այա բոլոր անդամներն, որից բաղկացաշ է մարդը, այն բոլոր գնդակները որից բաղկացած են անդամները, պահանջում

են սնունդ և նորոգութիւն, զարթնում են աննկարագրելի կերպիւ և պահանջում են կերակուր: Նոցա բոլորի բորբոքումն հեռագրական թելի նման արագ անց է կենում դէպի ստամոքսը, որ կենդրօն է սննդեան նիւթերի համարև նորա միջումն աւելացնում է այն նիւթերի մեծ քանակութեամբ հաւաքուելուն, որք ծառայում են մարսողականութեան և աստիճան առ աստիճան զարթեցնում են և աւելացնուն այն զգացմունքը, որ ասում են սովատանջութիւն: Այդ ընդհանուր բորբոքումն կարելի է նմանացնել կրակի, երբ անդադար այրվում է չոր խոտը և աւելանում է բոցը, եթէ չը հանգցնէք: Այդպէս էլ մարմնի մասունքները չը նորոգուելով նոր ստացած կերակուրից, անդադար մաշվում և թուլանում են, բայց մինչև դեռ զօրութիւն կայ նոցա մէջ, անտանելի
կերպիւ անհանգստացնելով և կատաղացնելով մարդուն, նորան հարկադրում են ամեն բան անել միայն բաւականացնել այս անթիւ և անհանգիստ գնդակներին, որք պատերազմում ենՆորա մէջ: Այդ պատճառաւ սովատանջ մարդը դառնում է կատաղի գազան, նորա մէջ բոլոր մարդկային զգացմունքները կորչում են, բացի կերակուրից, հացից: Նա պատրաստ է անել ամենայն ինչ, ծախել, ոչնչացնել բոլորը, ինչ թանգ էր, ինչ սուրբ էր նրան՝ մի կտոր սև հացի համար:Բայց վերջապէս մարմնի մասունքները չը ստանալով իւրեանց պահանջը, թուլանում են, հետևաբար նուաղում է և սովատանջը, նա անզգայ և կարծես թէ ննջալիս լինի, նա ոչ զարթուն է և ոչ քնած և կիսաերազում նորա առջև անց են կենում զանազան կերակուրներ. նորա աչքերն կարծես թէ տեսնելիս լինեն համով կերակուրներ, նոքա քիմքը զգալիս լինի անոյշ ճաշակները և նորա հոտոտելիքը ըմբռնելիս լինեն ախորժ կերակուրների հոտերն (галуцинація). խեղճ ողորմելին չէ էլ աշխատում արթնանալ այս գրաւիչ դրութիւնից, որովհետև ինչ որ նա արթուն ի զուր էր պտռտում, նա երազում է ստանում: Նորա դրութիւնը տասնապատիկ վատանում է երբ նա դատարկ փորի սաստիկ ցաւերից ու կտրատելուց արթնանալով տեսնում է, որ այս բոլոր խնջոյքը ցնորք էր, երազ էր: Կրկին և կրկին ընկնում է անզգայ դրութեան մէջ և վերջապէս մեծ տանջանքով տալիս է շունչը հաց կանչելով:

Բայց երբ այսպէս սրընթաց չէ լինում սովատանջութիւնը, այլ կամաց կամաց հետևում են զանազան ցաւեր, որոնք վաղ կամ ուշ տանում են խեղճ նահատակին գերեզման. 1) Արիւնի պակասութիւնը (Anaemia), ուր արիւնի կարմիր գնդակներն, որոնք ծառայում են մարմնի սննդեան համար չեն կարողանում իւրեանց գործը կատարել և հետևաբար մարմինը թուլանում է և նուազում, 2) Անբաւականացուցիչ սնունդ բոլոր մարմնի (Scorbut), ուր բացի կարմիր գնդակների պակասիլն նաև արիւնի ջրային մասն շատանալով, սկսում են ուռչել լինդերը, ոտներն և ձեռները, հիւանդը թուլանում է աստիճան առ աստիճանչէ կարողանում շարժվիլ և վերջապէս մեռնում է զանազան ցաւերից, որոնց ստսնալուն շատ ընդունակ է լինում այսպիսի մի թուլացած մարմին. 3) քաղցածութեան հարինք (Hunger-Typhus), որ նոյնպէս գոյանում է մարմնի նուազելուց և

վատ սնունդվելուց, ուր մարմինն ընկնելով տաքութեան մէջ ապականուած արիւնը հոսում է արագ և պատռելով իւր խողովակները, այստեղ այնտեղ դուրս է գցում մարմնի վերա կարմիր գծեր, ու կէտեր, ներկուած, քայքայուած աիւնից: Այսպիսի հիւանդը չը զգալով իւր դրութիւնը մեռնում է առանց ուշքի. ի հարկէ հետևում են և այլ ցաւեր, բայց այս քանիս մտաբերելն էլ բաւական է:

Ահա փոքր Ասիայի սովատանջ Հայերի պատկերն գուցէ թոյլ նկարած ներկայացրի մեր հասկացողներին: Ամեն մի հայի իւր ապագայ հացի խնդիրն իւր
ազգի կապի հետ տեսնելով, պէտք է օգնէ այն մասին, որ այժմ սովատանջ մաշվում է օտար ազգի անհոգութիւնից և անընդունակութիւնից: Ես չեմ կամենում երկարացնել խօսքս, որովհետև այն կէտից նայելով մարդկութեան և բնութեան վերա, ինչպէս ես ներկայացրի, շատ հասկանալի պէտք է լինի, որ թէ պատմութիւնը, թէ ներկայ քաղաքական դրութիւնը և թէ բնական պատմութեան օրէնքներն ցոյց են տալիս հետևեալն. — Անթիւ գնդակներ միանալով միմեանց հետ կազմում են մարմին, որի գոյութեան համար հարկաւոր է կերակուր, սա լինի մտածող էակ թէ այլ կենդանի: Այս վերջիններս ստանում են իւրեանց ապրուստը մէկ մէկուց, պատերազմելով միմեանց դէմ: Մարդիք միմեանց հետ կապվելով կազմում են ընտանիք, հասարակութիւն և ազգութիւն: Ազգերն պատերազմելով ազգութեան հետ աշխատում են իւրեանց գոյութիւնը պահպանել և բարւոքել:Այսպէս մէկն ապրում է միւսի հաշւով, թէ կենդանեաց մէջ և թէ ազգերի: Այս եսականութիւնը ինչպէս տեսնում էք դուրս է գալիս բնական օրէնքից: Մեզ ամնե երկրում ծանր է լինում ստանալ օրական հացն, մի տեղ մերոնք սովատանջ մեռնում են ինչպէս Փոքր Ասիայում և Պարսկաստանում. իսկ միւս տեղերն շատ թանգ գնով են փեռք բերում օրական ապրուստ: Այսպէս շարունակվում է շատ վաղ ժամանակից և կը շարունակվի, մինչ մենք չի զգանք մեր ամեն մի անհատի և ազգութեան գոյութեան կապը մի կտոր հացի մէջ ստացած առատ փեռքով և իստակ աղբիւրից առանց մուրացկանութեան կամ ստրկութեան: Այս գաղափարն սիրոյ մեծ գործի անունով դէպի մարդկութիւնը, որին պատկանում են և հայերը պահանջում է անհատներից օգնել սովատանջներին… Այս պահանջն այնպէս բնական է, ինչպէս առանձինգնդակների ապրելն մարմնի անդամների համար, իսկ սրանց գոյութիւնըմարմնի մէջ քանդվում է, նա ենթարկվում է ցաւերին, եթէ նոյն կապը քանդվում է ազգի մէջ, նոքա դառնում են կերակուր, զոհ և ստրուկ միւս զօրեղ ազգերի, ո՞վ ականջ ունի լսելու թող լսէ:

Բժշկապետ Գ. Քուչարեանց